

— Ոչ:

— Ի՞նչով էք սպասալում:

— Նստայ էինք «Մավրիտանիա» հիւրանցում:

— Դասուած կաք առաջ:

— Ոչ մի ժամանակ դասուած չը կամ, որովհետեւ որ մենք տուայ առյօւմ էինք...

— Զիք դասուել առաջ:

— Տէրը փրկէ ազատէ, ոչ մի ժամանակ:

— Մեզաղբական թղթի պատճենը ստացել էք:

— Ստացել ենք:

— Եսսեմք: Եվֆիմիա Խվանօվիա Բօչկօվա, — դիմեց նախագահը հետեւել մեզաղբականին:

Բայց Սիմոնը մնացել էր կանգնած, այսպէս որ նախագահի աշքից ծածկում էր Բօչկօվային:

— Կարտինկին, նստեք:

Բայց Կարտինկինը էլլ մնաց կանգնած և նստեց միայն այն ժամանակ, երբ պրիստավը վաղելով մօտեցաւ նրան և, զրուխը մի կողմ թէքած, աչքերը անբնական կերպով չսելով ու տրագիկական շառնջով ասաց՝ նստեք, նստէք:

Կարտինկինը նստեց նոյնպէս արագ, ինչպէս որ վեր էր կենում, և, խարամի մէջ կողուուելով, նորից սկսեց տնձայն շարժել թշերը:

— Չեր անունը, — յազնած-յեղնած հոգոց քաշելով դիմեց նախագահը երկրորդ մեզաղբականին, Բօչկօվային, առանց նայելու նրա վրայ և ինչ որ տեղեկութիւն վնասուելով առաջը դրուած թղթի մէջ: Սյդ անքան սովորական զործ էր նախագահի համար, որ զործի ընթացքը արագացնելու համար՝ նա կարող էր երկու բան միանդամից անել:

Բօչկօվան ՀՅ տարեկան էր, կոչումը՝ Կօլօմեա քաղաքի մեջաններից, զբաղմանքը՝ ազախին նոյն «Մավրիտանիա» հիւրանոցում: Դատի ու քննութիւնն տակ չէր եղել, մեղադրական թղթի պատճենը ստացել էր: Իր պատասխանները Բօչկօվան արտասանում էր չափազանց համարձակ կերպով և ձայնի այնպիսի ելմէջներով, կարծէր ամեն մի պատասխանից յետոյ նա աւելացնում էր՝ «այս, Եվֆիմիա, և Բօչկօվա, պատճենը ստացել եմ, և հպարտանում եմ զրանով, և ոչ ոքի թոյլ չեմ տալ ծիծաղելու Բօչկօվան առանց սպասելու, որ ասեն՝ նստի, իսկոյն նստեց տեղը, հէնց որ վերջացան հարցերը:

— Չեր անունը, — դիմեց նախագահը երրորդ մեզաղբականին, Մասլովային: — Պէտք է վեր կենալ, — աւելացրեց նա մեղմու-

թեամբ ու քաղցրութեամբ, նկատելով, որ Մասօվան նստած էր:

Մասօվան արագ շարժումով վեր կացաւ և պատրաստականութեան արտայայտութեամբ, բարձր կուրծքը դորս քցած, առանց պատասխանելու, ուզիղ նայում էր նախադանի երեսին իր ժպում ու մի քիչ չի սե աչքերավ:

— Ի՞նչպէս է ձեր անունը?

— Անունս Լիւրօվ էր.— արտասանեց նա արագ արագ:

Այդ միջնորդին Նեխովիւդօվը, ովէսանին դրած, հերթով նայում էր մեղադրեախներին այն ժամանակ, երբ նրանց հարցեր էր տալիս նախադանը:— «Չէ, անկարելի բան է», մտածում էր նա, առանց աչքերը հեռացնելու Մասօվայից:— «Ա, ի՞նչպէս թէ Լիւրօվ», մտածում էր նա՝ լսելով նրա պատասխանը:

Նախադանը ուզում էր անցնել հետեւալ հարցմունքներին, բայց ակնացաւոր անդմբը կանգնեցրեց նրան, ինչ որ մի բան շնչարով բարկացած նախադանը գլխով համաձայնութեան նշան արեց ու զիմեց մեղադրեալին:

— Ի՞նչպէս թէ Լիւրօվ, — ասաց նա:— Այստեղ ուրիշ կերպ է գրուած:

Մեղադրեալը լուռ էր:

— Ես ձեզ հարցնում եմ, ի՞նչպէս է ձեր իսկական անունը:

— Մկրտչեան անունը, — հարցրեց բարկացկոտ անդմբը:

— Առաջ կատերինա էին ասում:

«Չէ, անկարելի է», շարունակում էր ինքն իրան ասել Նեխովիւդօվը, և սակայն նա արդէն բոլորովին անկասկած գիտէր, որ այդ նու էր, հէնց այն տանու աղջիկ աղախինը, որի վրայ ինքը սիրահարուած էր մի ժամանակ, այժ, սիրահարուած, որին յետոյ մի տեսակ խելացնորութեան բռպէում հրապուրեց ու թողեց և որին այսուհետեւ երբէք միտքը չէր բերում, որովհետեւ այդ լիշողութիւնը շատ կածալի էր, շատ ակնյայնի էր դատապարտում նրան և ցոյց տալիս, որ նա, — մի մարդ, որ այնքան հպարտ էր իր օրինաւորութեամբ, — ոչ միայն ոչ օրինաւոր մարդու նման, այլ ուզզակի սահր կերպով էր վարուել այդ կնոջ հետ:

Այս, կատիւշան էր այդ նեխովիւդօվը պարզ տեսնում էր այժմ այն բացառիկ ու խորհրդաւոր առանձնայակատիւթիւնը, որ որոշում է իւրաքանչիւր մարդուս մի ուրիշից, որ գարձնում է իւրաքանչիւր մարդուս առանձին, միակ, անկրկնելի մի բան: Զը նայելով Մասօվայի դէմքի անբնական սպիտակութեանը և գէրութեանը, այդ առանձնայակատիւթիւնը, այդ քաղցր, բայց ոփիկ առանձնայակատիւթիւնը երեւում էր այդ դէմքում, շրթունքներում, փոքր ինչ չի աչքերում և, զլիաւորապէս, այդ միա-

միտ, ժպտուն հայեացքում և ոչ միայն դէմքի, այլ և ամբ կերպարանքի վրայ դրոշմուած պատրաստականութեան արտյայտութեան մէջ։

—Այդպէս էլ պէտք է ասէիք, —զարձեալ մի տոանձ մեղմութեամբ ասաց նախապահը։ —Իսկ ձեր հայրանունը՝

—Ես ապօրինի զաւակ եմ, —ասաց Մատօվան։

—Բայց էլի ինչպէս էին ձեզ անուանում ձեր կնքաւ անունով։

—Միխայլօվան։

«Բայց ինչ կարող է արած լինել զայ, շարունակում մտածել, մինչ այդ, Նեխլիւդօվը, դժուարութեամբ շունչ քշելով։

—Ի՞նչպէս է ձեր ազգանունը, —շարունակում էր նախ գահը։

—Մօրս ազգանունով Մատօվա էի դրուած։

—Չեր կոչումը։

—Մեշշաններից եմ։

—Ռուս հաւատի էք։

—Ռուս հաւատի։

—Չեր զբաղմունքը ինչով էիք պարապուամ Մատօվան լուռ էր։

—Ի՞նչով էիք պարապուամ, —կրկնեց նախապահը։

—Այն տանն էի, —ասաց նա։

—Ի՞նչ տան, —խստութեամբ հարցրեց ակնոցաւոր տամբ։

—Ի՞նքններդ գիտեք, —ասաց Մատօվան, ժպտաց և իսկու արագ յետ նայելով, նորից աշըք յառեց ուղիղ նախապահի վրա։

Ինչ որ մի այնպիսի անբնական բան կար նրա դէմքի ստայայտութեան մէջ և սարսափելի ու մի և նոյն ժամանակ խղճալի բան նրա ասած խօսքերի իմաստի, այդ ժպտի ու ապագ հայեացքի մէջ, որ նա այդ միջոցին քցեց դահլիճի վրա որ նախապահը աշքերը քաշ քցեց և դահլիճի մէջ մի բռն կատարենալ լուռթիւն տիրեց։ Հասարակութեան մէջից մէջ ընդհատեց լուռթիւնը ծիծաղով։ Մի ուրիշը սըսացընց նախապահը բարձրացրեց զուսիսը և շարունակեց հարցերը։

—Դատի ու քննութեան տակ չէք եղել։

—Չեմ եղել, —կամոց ասաց Մատօվան, հոգոց քաշելով։

—Մեղադրական թղթի պատճէնը ստացնել էք։

—Ստացել եմ։

—Նստէք, —ասաց նախապահը։

Մեղադրեալը շրջադրեստը յետեից բարձրացրեց այն շաբանը։

ժումով, որով զուգուած կանաքը դրստում են իրանց զգեստների տուաը (շլեֆ) ու նստեց, ծակելով փոքրիկ սպիտակ ձեռները խալաթի թեքերի մէջ, առանց աշքերը նախագահից հեռացնելու:

Սկսեցին թուել կանչուած վկաներին, հեռացրին ներկայ եղաղ վկաներին, վճռեցին էքսպէրտ բժիշկի հարցը և հրաւիրեցին նրան նիստին; Յետոյ քարտուզարը վեր կացաւ ու սկսեց կարդալ մեղադրական թուղթը: Որոշ ու բարձր էր կարդում նա, բայց այնպէս արագ, որ նրա՝ բուրուց հայւանները անկանոն արտասանող ձայնը մի անընդհատ, քնարեր բորսոց էր գառնում: Դատաւորները կաթնում էին մէկ բաղկաթոսի այս բաղուկի վրայ, մէկ այն բաղուկի վրայ, * մէկ թիկունքի վրայ, մէկ սկզբանի վրայ, մէկ փակում էին աչքերը, մէկ էլ բաց անում ու փոխում իրար մէջ: Ժանդարմներից մէկը մի քանի անդամ զավեց յօրանջայի սկսուող ջղաձգութիւնը:

Մեղադրեալներից՝ Կարտինիինը անդադար շարժում էր թշերը, Բօշկօվան նստած էր բոլորովին հանգիստ և ուղիղ, երբեմն երբեմն մատով քորելավ զուխոր չորի տակից. Մասկօվան երբեմն մնում էր անշարժ նստած. Լսերով քարտուզարին ու նայելով նրա վրայ, երբեմն էլ ցնցւում էր ու կարծես ուզում էր առարկել, կարմրում էր ու յետոյ ծանր հասաշում, փոխում էր ձեռների դիրքը, յետ էր նայում ու զարձեալ աչքը յառում քարտուզարի վրայ:

Նեխլիւդօվը նստած էր առաջին կարդում իր բարձր աթոսի վրայ, որ երկրորդն էր ծայրից, ու պէնսնէն միշտ աչքին՝ նայում էր Մասկօվայի վրայ, և նրա հոգու մէջ կատարւում էր մի բարդ ու ցաւագին աշխատանք:

X

Մեղադրական թուղթը այսպէս էր կազմուած,—18... թուի յունուարի տասնեօթին «Մալրիտանիա» հիւրանոցում յանկարծամահ, էր եղաղ մի Ակուոր մարդ—Կուրդան քաղաքի Զըրդ զիւղայի վաճառական Ֆերազօն Եմելիանովիչ Սմելիկով:

Տեղական Հ-րդ բաժնի սստիկանական բժիշկը վկայել էր, թէ մահը տեղի էր ունեցել ոգելից ըմպելիքների շափաղանց գործածութիւնից յառաջացած սրաի պայթիւնից:

Սմելիկովի մարմինը յանձնել էին հոգին:

Մի քանի օր անցած, Սմելիկովի հայրենակից ու ընկեր մի վաճառական, Տիմօխին աղջանունով, Պետերբուրգից վերադառնալով և իմանալով նրա մահուան համընթաց հանգամանքները,

կասուկած յայտնեց, թէ նրան թունաւորել են՝ մօռը գանուռդ փողերը յափշտակելու նպատակով:

Սյդ կասուկածը հաստատուեց նախնական քննութեամբ, որ հաւասարեց,—1) Սմելկովի մահից քիչ առաջ բանկից սաացել էր 3,800 սուրբի արծաթի Մինչդեռ, հանգուցեալի դոյքը պահապանզական կարգով զրի անցնելիս՝ առձեռն դաել էին մինիայն 312 սուրբի 16 կոպէկ: 2) Ամբողջ նախընթաց օրը և մահից առաջ ամբողջ գիշերը Սմելկովը անց էր կացրել Լիւրկա անունով մի պացկայ հետ (Եկատերինա Մասլովայի հետ) կիտաեվայի անառակատանը և «Մալրիտանիա» հիւրանոցում, ուր, Սմելկովի յանձնարարութեամբ ու նրա բացակայութեամբ, Եկատերինա Մասլովան գնացել էր անառակատնից՝ փող բերելու, որ հանել էր Սմելկովի պայտասակից, բանալով այդ պայտասակը Սմելկովի սուած բանալիով, «Մալրիտանիա» հիւրանոցի սպասաւորների՝ Եվֆիմիա Բօչկովայի և Սիմօն Կարտինկինի ներկայութեամբ: Այն ժամանակ, երբ Մասլովան բացել էր Սմելկովի պայտասակը, ներկայ գտնուող Բօչկովան ու Կարտինկինը պայտասակի մէջ տեսնել էին 100 սուրբիանոց թղթադրամների կազոցներ: 3) Երբ Սմելկովը Լիւրկայի հետ նրանց անառակատնից վերադարձել էր «Մալրիտանիա» հիւրանոցը, Լիւրկան, սպասաւոր Կարտինկինի խորհրդով, տուել էր խմնելու Սմելկովին մի գաւաթիկ կօնեակ, առաջուց մէջը ածելով Կարտինկինից ստացած ինչ որ սպիտակ փոշի: 4) Հետեւեալ առաւօտեան Լիւրկան (Եկատերինա Մասլովան) ծախել էր անառակատան տիրուհուն, վկայ կիտաեվային, Սմելկովի աղամանդէ մատանին, որ իրը թէ ընծայ էր ստացել Սմելկովից: 5) «Մալրիտանիա» հիւրանոցի աղախին Եվֆիմիա Բօչկովան դրել էր տեղական առևտրական բանկը իր ընթացիկ հաշուին 1,800 սուրբի արծաթի:

Սմելկովի դիակի դատարժութեական գննութիւնն ու անդամահատութիւնը և փորութիւնների քիմիական հետազոտութիւնը անկասկած կերպով ապացուցել էին, թէ թոյն կայ հանգուցեալի մարմնի մէջ, որ և հիմք էր տուել եղբակացնեյու, թէ մահը յառաջացել էր թունաւորութիւնից:

Իրը մեղադրեալ դատի ենթարկուածները—Մասլովան (Լիւրկով մականունով), Բօչկովան և Կարտինկինը—իրանց մեղաւոր չէին ճանաչել: Բայց այդ, 1) Մասլովան ասել էր, թէ այն ժամանակ, երբ Սմելկովը գտնուում էր կիտաեվայի անառակատանը, որտեղ ինքը, իր ասելով, «աշխատում էր», նա իրան միասի ուղարկեց «Մալրիտանիա» հիւրանոցը փող բերելու, և ինքը, այնաև նրա տուած բանալիով բանալով նրա պայտասակը, վիրցրեց մէջիցը 40 սուրբի արծաթ, ինչով որ պատուիրուած

Էր իրան, բայց դրանից զատ փող չէր վերցրել, ինչպէս կարող են հաստատել Բօչկօվան և Կարտինկինը, որոնց ներկայութեամբ էր ինքը բացել ու կողպել պայտուակը և հանել փողը: Այնուհետև Մասլօվան ասն էր, որ ինքը, երկրորդ անգամ Սմելկօվ վաճառականի համարը գնալով, յիրաւի, Կարտինկինի խրատով, Սմելկօվին կօնեակ էր տուել ինմելու մէջը՝ իր կարծելով՝ քնաբեր փոշի ածած, որպէս զի վաճառականը քնէր ու շուտով բաց թողնէր իրան: Մատանին ընծայել էր իրան Սմելկօվը այն ժամանակ, երբ նա ծեծել էր իրան և ինքը սկսել էր լալ ու կամեցել էր գնալ տուն: 2) Եվֆիմիա Բօչկօվան ասել էր, թէ ինքը ոչինչ չը գիտի կորած փողերի մասին, թէ ինքը վաճառականի համարը չէր մտել և թէ միայն Լիւբկան է իր ուզեցածովը ամեն բան արել այնտեղ և եթէ ճիշտ որ բան են գողացել վաճառականից, Լիւբկան կը լինի այդ արած այն ժամանակ, երբ վաճառականի բանալին հետը եկել էր փող տանելու:

Երբ քարտուղարը այդ տեղը կարդաց, Մասլօվան ցնցուեց ու, բերանը բանալով, յետ նայեց Բօչկօվայի վրայ:

Իսկ երբ Եվֆիմիա Բօչկօվային քննիչը ցոյց տուեց նրա՝ բանկը դրած 1,800 արծաթ ոռուքլիի հաշիւը, — շարունակում էր կարդալ քարտուղարը, — ու հարցրեց՝ որտեղից է նրան այդքան փող, նա ասաց, թէ այդ փողը 12 տարուայ ընթացքում դատել են ինքը ու Սիմօն Կարտինկինը, որի հետ ինքը ամուսնանալու էր շուտով: Սիմօն Կարտինկինն էլ իր առաջին ցուցմունքի ժամանակ խոստովանել էր, որ ինքն ու Բօչկօվան, բանալին հետը հիւրանոց եկած Մասլօվայի խրատով, գողացել էին փողը ու բաժանել իրանց ու Մասլօվայի մէջ: Կարտինկինը այն էլ էր խոստովանել, որ ինքն փոշի էր տուել Մասլօվային վաճառականին քնացնելու համար: Սակայն երկրորդ ցուցմունքի ժամանակ նա բացասել էր իր մասնակցութիւնը փողերի յափշտակութեան գործում, ինչպէս և Մասլօվային փոշի տալը, միմիայն Մասլօվային մեղադրելով ամեն բանում: Իսկ Բօչկօվայի բանկը դըրած փողերի վերաբերմամբ, նա Բօչկօվայի ասածին համաձայն ասել էր, թէ իրանք երկուառվ են վաստակել այդ գումարը 12 տարի ծառայելով հիւրանոցում ու պարոններից պարզեներ ըստանալով իրանց ծառայութիւնների համար:

Այնուհետև գալիս էին նրանց երեսէերես խօսեցնելու նըկարագրութիւնը և վկաների ցուցմունքները:

Մեղադրական թուղթը այսպէս էր վերջանում:
«Երկրորդ գիլիմիայի վաճառական Սմելկօվը, անձնատուր եղած հարբեցութեան ու անառակութեան, յարաբերութեան մէջ է մտնում Կիտաեվայի անառակատանը Մասլօվայի հետ

(Լիւրկա մականունով) և, առանձնապէս տաքանալով նրա վրայ, 188* թուի յունուարի 17-ին պայուսակի բանալին տապիս է վերուժշեալ Լիւրկային և ուղարկում է իր բռնած համարը, որպէս զի նա այնտեղ գտնուած պայուսակի մէջից բերի 40 ոռոբլի փող, որ իրան հարկաւոր էր նրան հիւրասիրելու համար։ Համարը գնալով, Լիւրկան, նոյն և Մասլօվան, փողերը պայուսակից հանելիս, համաձայնութիւն է կայացնում Բօչկօվայի և Կարտինկինի հետ, որպէս զի միասին յափշտակին Սմելկօվի բոլոր փողերն ու թանկագին իրեղէնները և բաժանեն իրար մէջ, որ և կատարում են»։—Այդ միջոցին Մասլօվան նորից ցնցուեց, նոյն իսկ վեր թուաւ, շառագունեց ու սկսեց ինչ որ ասել, բայց դատաստանական պրիստալը կանգնեցրեց նրան։—«Այդ բաներից, —շարունակում էր կարդալ քարտուղարը, —Լիւրկային տալիս են աղամանդէ մատանին և հաւանօրէն մի փոքր գումար փող, որ նա թագցրել է կամ կորցրել, որովհետև Մասլօվան (Լիւրկան) այդ գիշեր հարբած դրութեան մէջ էր։ Իսկ որպէս զի ծածկեն յանցանքի հետքերը, մեղասակիցները վճռում են Սմելկօվին նորից բերել համարները ու այնտեղ թունաւորել նրան Կարտինկի մօտ գտնուող մինդեղով։ Այդ նպատակիով Մասլօվան վերադառնում է կիտաեկայի անառակատունը և այնտեղ համոզում է Սմելկօվին յետ դառնալ իր հետ Մավրիտանիա համարները։ Երբ որ Սմելկօվը վերադառնում է համարները, Մասլօվան առնում է Կարտինկինի բերած փոշին, ածում է գինու մէջ ու տալիս է այդ գինին խմելու Սմելկօվին, որ և մեռնում է դըրանից։

Բոլոր վերկը յիշուածների հիման վրայ, Բօրկի գիւղի շինական Սիմօն Կարտինկին, 33 տարեկան, մեշչանների դասից Եվֆիմիա Իվանօվա Բօչկօվա, 43 տարեկան, և մեշչանների դասից Եկատերինա Միխայլօվա Մասլօվա, 27 տարեկան, մեղադրուում են նրանում, որ 188* թուի յունուարի 17-ին, նախապէս համաձայնութիւն կայացնելով իրանց մէջ, յափշտակել են Սմելկօվ վաճառականի փողերն ու մատանին, ընդամենը 2,500 ոռոբլի արժողութեամբ, և նրան սպանելու դիտաւորութեամբ թոյն են խմացրել նրան, Սմելկօվին, որից և առաջացել է նրա, Սմելկօվի, մահը։

Այդ յանցանքը նախատեսուած է պատժական օրէնսգրքի 1453 յօդուածի 4 և 5 կէտերով։ Ուստի և քրէական դատավարութեան 201 յօդուածի հիման վրայ, գիւղացի Սիմօն Կարտինկինը և մեշչանների դասին պատկանող Եվֆիմիա Բօչկօվան ու Եկատերինա Մասլօվան ենթակայ են նահանգական դատարանի դատին երդուեալ ատենակալների մասնակցութեամբ»։

Այդաբէս վերջացրեց երկար մեղադրական թղթի ընթերցումը քարտուղարը և ծալելով թերթերը՝ նստեց տեղը, սղալելով երկու ձեռքով երկար մազերը։ Բոլորը թերթեացած շունչ քաշեցին, հաճելի գիտակցութեամբ, որ այժմ հետախուզութիւնը սկսուել է և իսկոյն ամեն բան կը պարզուի ու արդարութիւնը բաւարարութիւն կը ստանայ։ Միայն նեխիւթօվը չէր զգում այդ բանը, — նա ամբողջապէս պաշարուած էր սարսափով, մոտածելով, թէ ինչ կարող էր արած լինել այն Մասլովան, որին նա անմեղ ու հիանալի աղջիկ գիտէր 10 տարի առաջ։

XI

Երբ մեղադրական թղթի ընթերցումը վերջացաւ, նախագահը, խորհրդակցելով միւս անդամների հետ, դիմեց Կարտինկինին այնպիսի արտայայտութեամբ, որ պարզ ասում էր, թէ հիմի մնաք արդէն ամեն բան կ'իմանանք ամենամնարամասն և ամենահաստատ կերպով։

— Գիւղացի Սիմօն Կարտինկին, — ականց նա, թեքուելով դէպի ձախու

Սիմօն Կարտինկինը վեր կացաւ, ձեռները ձիգ կախ արած ու ամբողջ մարմինը առաջ քցած, առանց ընդհատելու թշրի անձայն շարժումը։

— Զեղ մեղադրում են, թէ 188 * թ. յունուարի 17-ին դուք, Եվֆիմիա Տօչիօվայի և Եկատերինա Մասլովայի հետ ընկերացած, Ամելիօվ վաճառականի պայտուսակից գողացել էք նըրան պատկանող փաղերը և յետոյ մկնդեղ էք բերել ու համոզել Եկատերինա Մասլովային գինու հետ թոյն տալ խմելու Ամելիօվ վաճառականին, որ և մեռել է այդ բանից։ Ընդունում էք, որ մեղաւոր էք, — ասաց նախագահը ու թեքուեց դէպի աջ։

— Ե՞նչպէս կարելի է այդպիսի բան, քանի որ մեր գործը հիւրերին ծառայելին է...

— Այդ յետոյ կ'ասէք, Ընդունում էք արդեօք ձեր մեղաւորութիւնը։

— Ամեննեին։ Ես միայն...

— Այդ յետոյ կասէք։ Ընդունում էք արդեօք ձեր մեղաւորութիւնը, — հանդիսաւ, բայց անյոզդողդ կերպով կրկնեց նախողահը։

— Զեմ կարող ընդունել, որովհետեւ...

Դատաստանական պրիստաւուը կրկնեց վաղեց դէպի Սիմօն Կարտինկինը և արագիկական շունչով լուցրեց նրան։

Նախագահը՝ այնպիսի արտայայտութեամբ, թէ այդ գործը

այժմ՝ արդէն վերջացրել է, բարձրացրեց այն ձեռքի արժունկը, որով բնած էր թուղթը, ու զբոց մի ուրիշ տեղ և դիմեց Եւ-ֆիմիա Բօչկօվային:

—Եւֆիմիա Բօչկօվա, ձեզ մեղադրում են, թէ 188⁴ թ. յունուարի 17-ին, «Մաւրիսանիա» հիւրանոցում, Սիմօն Կար-աբինինի և Եկատերինա Մաւլօվայի հետ, Սմելիօվ վաճառակա-նի պայտասակից գողացել էք նրա փողերն ու մատանին և գո-ղացածը բաժանել մէջներդ, իսկ յետոյ, յանցանգներդ ծածկելու համար, Սմելիօվ վաճառականին թոյն էք տուել խմելու որից և անդի է ունեցել նրա մահը Ընդունում էք, որ մեղաւոր էք:

—Ես ոչ մի բանում մեղաւոր չեմ,—Ժիր ու հասաստ ար-տասանեց մեղադրեալը—Ես իսկի նրա համարն էլ չեմ մտել... Այ, այս անզգամին է մտել այստեղ ու հէնց սա էլ պէտք է ա-րած լինի այդ բանը...

—Այդ յետոյ կասէք, —ասաց դարձեալ Նոյնպէս մեղմ ու անյողդոզդ կերպով նախադահը—Ուրեմն չէք ընդունում, որ մեղաւոր էք:

—Ես ոչ փողից եմ տեղեակ, ոչ թոյն տալուց, ևս իսկի համարն էլ չեմ մտել Եթէ, ևս այստեղ լինէի, սրան դուրս կը շպրտէի:

—Չէք ընդունում, որ մեղաւոր էք:

—Երբէք:

—Հաս լաւ:

—Եկատերինա Մաւլօվա, —սկսեց նախագահը, դիմուլով կրրորդ մեղադրեալին, —ձեզ մեղադրում են, թէ, Սմելիօվ վա-ճառականի պայտուակի բանալին հնաներդ «Մաւրիսանիա» հիւ-րանոցը զնալով, գողացել էք այդ պայտուակից նրա փողերն ու մատանին, —ասում էր նա՝ լաւ սերտած դասի որէս, միաժամա-նակ ականջը թէքնով դէմի ձախակողմնան անդամը, որ ասում էր, թէ իրեդէն ապացոյցների ցանկին նայած պակասում է մի օրուակ... Գողացել էք պայտուակից փողերն ու մատանին, —կրկնեց նախագահը, —և գողացածը բաժանել մէջներդ, իսկ յե-տոյ, մէկ էլ Սմելիօվ վաճառականի հետ զնալով «Մաւրիսանիա» հիւրանոցը, տուել էք Սմելիօվին խմելու մէջը թոյն խաւնած զինի, որից և անդի է ունեցել նրա մահը Ընդունում էք, որ մեղաւոր էք:

—Ոչ մի բանում մեղաւոր չեմ,—արագ արագ արտասանեց Մաւլօվան, —ինչպէս սկզբումը տուել էի, այժմ էլ ասում եմ, —չեմ վերցրել, չեմ վերցրել ու չեմ վերցրել, ոչինչ չեմ վերցրել, իսկ մատանին նա ինքն է տուել ինձ:

— Զբար ընդունում, որ մեղաւոր էք 2,500 սուրբի փող գողաճալում, — ասաց նախագահը:

— Ասում եմ, որ ոչինչ չեմ վերցրել բացի 40 սուրլուց:

— Եւս, իսկ այն բանում, որ Ամելիօվ վաճառականին գիտութիւն չունի գոշի էք առեւլ խմելու, մեղաւոր ընդունում էք ձեզ:

— Այդ բանում մեղաւոր եմ Բայց ինձ ասել էին, թէ այդ փոշին քուն բերող է, ես էլ կարծում էի, թէ նրանից ոչինչ չի լինի: Իսկ այդպիսի բան չէի կարծում և չէի ուզում: Ասաւուծու անունը վկայ, չէի ուզում, — ասաց նա:

— Ուրեմն, գուք չէք ընդունում, թէ մեղաւոր էք Ամելիօվ վաճառականի փողերն ու մատանին գողաճալում, — ասաց նախագահը: — Բայց ընդունում էք, որ փոշի էք առեւլ նրան խմելու:

— Ընդունելով ընդունում եմ, բայց կարծում էի, թէ քուն բերող փոշի է: Ես տուեցի խմի միայն նրա համար, որ քնի, — մահը չէի ուզում ու չէի կարծում:

— Ետա լաւ, — ասաց նախագահը, ակներեաբար գոհ հարց ու փորձի արդիւնքից: — Ուրեմն պատմեցէք, թէ ինչպէս եղաւ այդ գէպքը, — ասաց նա, թիկն ապլով բազկաթոսի մէջքին և ձեռները զնելով սեղանի վրայ: — Մէկ մէկ պատմեցէք բարորը, ինչ որ եղել է: Դուք կարող էք թեթևացնել ձեր վիճակը անկեղծ խոսափանելով ամեն բան:

Մասլօվան լուռ էք, աչքը դարձեալ յառած ուղիղ նախագահի սրեսին:

— Պատմեցէք, թէ ինչպէս եղաւ:

— Ի՞նչպէս եղաւ, — յանկարծ արագ-արագ սկսեց Մասլօվան: — Եկայ հիւրանոցը, ինձ տարան համարը, նա այնտեղ էր և արդէն թունդ հարրած: (Մասլօվան սարսափի մի առանձին արտայացտութեամբ, չուելով աչքերը, արտասանեց այդ նախուոքը), ես ուզում էի զնալ, նա չը թողից:

Նա լոեց, կարծես յանկարծ խօսքի թելը կորցնելով կամ մի ուրիշ բան յիշելով:

— Եհա, յետո՞յ:

— Ի՞նչ յետոյ: Յետոյ մի քիչ մեացի ու տուն զնացի: Այդ ժամանակ դատախաղի օդնականը կիսով չափ բարձրացաւ տեղիցը, անբնական կերպով կոթնելով մի արմունկի վրայ:

— Հարց էք ուզում առաջարկել, — ասաց նախագահը և, դրական պատասխան ստանալով դատախաղի օդնականից, ձեռքով նշան արեց, թէ կարող է հարցնել:

— Ես կ'ուզէի այս հարցը տալ, արդեօք մեղադրեալը առաջ

ծանօթ էր Ախմօն Կարտինկինի հետ,—հարցրեց դատախաղի օդ-նականը, առանց Մասլովային նայելու:

Եւ, հարցը տալով, սզմեց շրթունքները ու խոժոսուեց:

Նախագահը կրկնեց հարցը: Մասլովան վախուորած հայ-եացքով յառեց աչքերը դատախաղի օդնականի վրայ:

—Միմօնի հետ: Հա, ծանօթ էի,—ասաց նա:

—Ես կ'ուզէի իմանալ այժմ, թէ ինչումն էր կայանում մեղադրեալի ծանօթութիւնը կարտինկինի հետ: Շուտոշուտ էին արդեօք տեսնուում իրար հետ:

—Ինչումն էր մեր ծանօթութիւնը: Ծանօթութիւն չէր, այլ կանչում էր ինձ հիւրերի մօտ,—պատասխանեց Մասլովան, անհանդիսատ կերպով ման ածելով աչքերը դատախաղի օդնակա-նից նախագահի վրայ և նախագահից դատախաղի օդնականի վրայ:

—Ես կ'ուզէի իմանալ, թէ ինչու կարտինկինը բացառապէս Մասլովային էր տանում հիւրերի մօտ և ոչ միւս աղջիկներին, —հարցրեց դատախաղի օդնականը աչքերը կուչ ածելով և թե-թե, մէջիստօֆէկեան խորամանկ ժպիտով:

—Զը դիտեմ Ես ի՞նչ իմանամ,—պատասխանեց Մասլո-
վան, վախուորած նայելով չորս կողմը և մի ակնթարթ պահե-
լով հայեացքը Նեխիլուովի վրայ,—ում ուզում էր՝ կանչում էր:

«Միթէ ճանաչեց»—սարսափելով մտածեց Նեխիլուովը,
զգալով թէ ինչպէս արիւնը տալիս է երեսը, բայց Մասլովան,
առանց նրան ուրիշներից ջոկելու, իսկոյն շուռ եկաւ և նորից
վախուորած հայեացքով յառեց աչքերը դատախաղի օդնականի
վրայ:

—Ուրեմն մեղադրեալը բացասում է այն բանը, թէ ինքը
որ և է մօտիկ յարաբերութիւն է ունեցել կարտինկինի հետ
Շատ լաւ: Ես այլ ևս ոչինչ չունեմ հարցնելու:

Եւ դատախաղի օդնականը իսկոյն և եթ վերցրեց արմուն-
կը սեղանի վրայից ու սկսեց ինչ որ մի բան զրել: Իրօք նա
ոչինչ չէր զրում, այլ միայն զրիչը անում ըերում էր իր
թերթիկի տառերի վրայով, բայց նա տեսել էր, որ դատախաղ-
ներն ու փաստաբանները այդպէս են անում,—ճարպիկ հարց
տալուց յետոյ իրանց ճառի մէջ այնպիսի նկատողութիւն են
զրում, որով պէտք է ջախճախեն հակառակորդին:

Նախագահը իսկոյն և եթ չը դիմեց մեղադրեալին, որով-
հետեւ նա այդ ժամանակ հարցնում էր ակնոցաւոր անդամից,
թէ արդեօք նա համաձայն է մեղադրեախների մեղասորութեանը
վերաբերեալ հարցմունքներին, որոնք արդէն նախապէս պատ-
րաստուած էին ու արձանագրուած:

— Իսկ յետոյ ինչ եղաւ, — շարունակեց հարցնել նախագահը:

— Տուն եկայ, — շարունակեց Մասլովան, արդէն աւելի համարձակ նայելով միմիկայն նախագահի վրայ, — վողերը տուեցի մեր տիրուհուն ու պառկեցի քննելու: Նոր էի աչքերս խփել,

— մէկ էլ տեսնեմ մեր աղջիկներից մէկը, թէրտան, զարթեցում է ինձ: «Գնա, քո վաճառականն էլլի եկել է», ևս չէի ուղում դրւու զալ բայց տիկինը հրամացեց: Այդ միջոցին նա, — Մասլովան նորից ակնյայտնի սարսափով արտասանեց այդ նա խօսքը, — նա խմացնում էր մեր աղջիկներին, յևոյ ուղեց ուղարկել գինի բերելու, բայց փողերը բոլորը սրծել էին: Այն ժամանակ նա ինձ ուղարկեց իր համարը: Ես ասաց, որտեղ են փողերը ու որքան պէտք է վերցնել: Ես էլ գնացի:

Նախագահը այդ ժամանակ քչփշում էր ձախակողմեան անդամի նաև և չէր լսում Մասլովայի ասածը, բայց ցոյց տալու համար, թէ ակլզից մինչև վերջը լսել է, կրկնեց նրա վերջին խօսքերը:

— Գնացիք: Իսկ յետոյ, — ասաց նա:

— Գնացիք ու ինչ որ պատուիրել էր արեցի, մասայ համարը: Մենակ չը մտայ, այլ Սիմեոն Միխայլովիչին որ սրան էլ կանչեցի, — ասաց նա ցոյց տալով Բօշկովայի վրայ:

— Սուտ է առում, մանեն էլ չեմ մտել ու... — ականց Բօշկովան, բայց նրան լուեցրեցին:

— Սրանց մօտ հանեցի չորս հատ տամանոց, — շարունակեց Մասլովան խոժոռուելով և առանց Բօշկովային նայելու:

— Իսկ այդ 40 սուրլին հանելիս, մեղադրեալը չը նկատեց, թէ որքան փող կար այստեղ, — զարձեալ հարց տուեց դատախազը:

Մասլովան ցնցուեց, հէնց որ դատախազը դարձաւ դէսի նաև նա չը գիտէր, թէ ինչումն է բանը, բայց զդում էր, որ այդ մարդը իր վատն է ուղում:

— Ես չը հաշուեցի, աեսայ որ միայն հարիւրանոցներ էին:

— Մեղադրեալը տեսել է հարիւրանոցներ, — ես այլ ես ու շնչ չունեմ հարցնելու:

— Լաւ, փողերն ինչ արեցիք, ապրաք, — շարունակեց նախագահը, ժամանակոցին նայելով:

— Տարայ:

— Իսկ յետոյ, — հարցրեց նախագահը:

— Իսկ յետոյ նա նորից տարաւ ինձ իր հետ, — ասաց Մասլովան:

— Լաւ, բայց ինչպէս տուեցիք նրան խմելու: մէջը փոշի խառնած դինին, — հարցրեց նախագահը:

— ի՞նչպէս տուեցի. Ածեցի զինու մէջ ու տուեցի:

— ի՞նչո՞ւ տուեցիք:

Մասլօվան, առանց պատասխանելու, խոր ու ծանր հոգոց

քաշեց:

— Ի՞նչ անում էի, չէր թողնում, որ զնամ, — ասաց Մասլօվան փոքր ինչ լսելուց յետոյ: — Տանջուեցի նրա ձեռքին Դուրս եկայ միջանցքը ու ասայի Սիմօն Միխայլովիչին՝ «Կրանի թողնի պատմ Յոզենի ևմ»: Իսկ Սիմօն Միխայլովիչը ասաց թէ՝ «Անդ էլ է ձանձրացրել Ռւզում ևնք քուն բերող փաշի առլ խմի. Կը իշ ձանձրացրել Ռւզում ևնք քուն բերող փաշի թէ՝ «լաւ»: Ես կարգնի, այն ժամանակ կ'երթառ: Ես ասացի թէ՝ «լաւ»: Ես կարգնում էի, թէ վեսակար փաշի չէ Սիմօն Միխայլովիչը տուեց ծում էի, թէ վեսակար փաշի չէ Սիմօն Միխայլովիչը տուեց ինձ թղթի մէջ փաթթաթած: Ես ներս մտայ, նա պառկած էր միջնորմի յետելին և ներս մտնելուս պէս ինձ որսոտիրեց կօնուակ տոտ իրան իսմելու: Ես վերցրի սեղանի վրայից փինչածուայնի շիշը, երկու բաժակ լցրեցի, մէկն ինձ, մէկը նրան, փոշին էլ ածեցի նրա բաժակի մէջ ու տուեցի իրան: Միթէ ես կը տայի, եթէ իմանալի:

— Լաւ, բայց ինչպէս ընկաւ. Ճեր ձեռքը նրա մատանին, — հարցրեց նախադանը:

— Մատանին նա ինքն ընծայեց ինձ:

— Ե՞րբ ընծայեց ձեզ:

— Հետո միասին որ համարն եկանք, ես ուզում էի զնալ, իսկ նա խփեց զլիիս ու սանրս կոտրեց: Ես բարկացայ և ուզում էի զնալ: Նա մատիցը մատանին հանեց ու ընծայեց ինձ, որպէս զի չը զնամ, — ասաց նա:

Այդ ժամանակ դատախազի օգնականը նորից տեղից բարձրացաւ և զարձեալ նոյն կեղծ միամիտ կերպարանքով թոյլուութիւն ինդրեց էլի մի քանի հարցեր տալու և, իրաւունք ստանալով, հարցրեց, զլուխը ծուլով սոկելար օձիքի վրայով:

— Ես կ'ուզէի իմանալ, որքան ժամանակ է մնացել մեղադրեալը Սմելիօվ վաճառականի համարում:

Նորից սարսափ եկաւ. Մասլօվայի վրայ, և նա, անհանգիստ հայեացը արագ արագ տարուբերելով դատախազի օդ նականից նախադանի վրայ, շուտշուտ ասաց.

— Զեմ միշում, որքան ժամանակ:

— Լաւ, իսկ չը յիշում մեղադրեալը, հիւրանոցում որ և է տեղ մտել է ինքը Սմելիօվ վաճառականի մօտից դարս գալուց յիսոյ:

Մասլօվան մտածեց:

— Կողքի դատարկ համարը մտել եմ, — ասաց նա:

— ի՞նչու մտաք, — ասաց դաստախազի օդնականը, ողեռ-
րուելով և ուղղակի նրան դիմելով *):

— Պէտք է շորերս կարգի բերէի ու կառապանին սպա-
սէի:

— Իսկ կարտինկինը այդ համարումն էր մեղադրեալի հետ
թէ ոչ:

— Նա էլ մտաւ այնտեղ:

— Ի՞նչու մտաւ:

— Վաճառականից ֆին-շամպայն էր մնացել, միասին խր-
մեցինք:

— Այս, միասին խմեցին Շատ լաւ:

— Իսկ խօսակցութիւն եղաւ, մեղադրեալի ու Սիմօնի մէջ և
ինչի մասին:

Մասլովան յանկարծ խռժոսուեց, թունդ կարմրատակեց և
արագ-արագ արտասանեց.

— Ինչ որ ասացի, այն էր, էլ ոչինչ չը գիտեմ: Ինչ ու-
զում էք՝ արէք ինձ: Ես մեղաւոր չեմ, ասացի պրծայ: Նրա հետ
ոչինչ չեմ խօսել: Ինչ որ կար, բոլորը պատմեցի, — ասաց նա:

— Ես այլ ևս ոչինչ չունեմ հարցնելու, — ասաց դաստախազը
նախաղահին և, անքնական կերպով վեր քաշելով ուսերը, սկսեց
արագ-արագ զրել իր ձառի կօնսպէկտի մէջ մեղադրեալի խոս-
տովանութիւնը, թէ ինքն ու Սիմօնը մտել էին դատարկ հա-
մարը:

Լոռւթիւն տիրեց:

— Ել ոչինչ չունիք ասելու:

— Ինչ որ կար ասացի, — պատասխանեց Մասլովան, հոգոց
քաշելով, ու նստեց:

Դրանից յետոյ նախազանը ինչ որ զրեց թղթի մէջ և իր
ականջին շնչող ձախակողմնան անդամի ասածը լսելուց յետոյ
յայտարարեց, որ 10 րոպէով ընդմիջում է նիստը, և շտապով
վեր կացաւ ու դուրս եկաւ դահլիճից:

Դատաւորներից յետոյ վերկացան և երդուեալ ատենակալ-
ները, փաստաբաններն ու վկաները և կարնոր գործի մի մասն
արդէն արած լինելու զիտակցութեան հաճելի զգացմունքով
սկսեցին դէս-դէն գնալ:

Նեխովեգովը գնաց երդուեալ դատաւորների սենեակը և
նստեց այնտեղ պատուհանի մօտ:

*.) Դատարանում թէ դատախազը, թէ փաստաբանը մեղադրեալին
հարցեր տալիս պէտք է դիմեն նախաղահին:

XII

Այս, կատիւշան էր այդ:

Ահա թէ ինչ յարաքերութիւններ էր ունեցել Նեխլիւդօվը կատիւշայի հետ.

Առաջին անգամ՝ Նեխլիւդօվը կատիւշային տեսաւ այն ժամանակ, երբ համալսարանի երրորդ կուրսում հողային սեփականութեան մասին շարադրութիւն պատրաստելիս՝ ամառը ասրբեց իր մօրաքոյրների մօտ: Առհասարակ նա իր մօր ու քրոջ հետ ամառն ապրում էր մայրական մեծ կալուածում, որ գոնուում էր Մօսկուայի մօտ Բայց այդ ասրին քոյրը մարդու գնաց, մայրն էլ գնաց արտասահման՝ այստեղի ջրերում բժըշկուելու: Խակ Նեխլիւդօվը պէտք է շարադրութիւն դրեր, ուստի և վճռեց ամառը անցկացնել մօրաքոյրների մօտ: Նրանց մօտ, նրանց խուլ անկիւնում, հանգիստ էր, զուարձութիւններ չը կային, և մօրաքոյրները սիրում էին իրանց քրորդուն ու ժառանգին, նա էլ սիրում էր նրանց հնաձնութիւնը և նրանց կեանքը պարզութիւնը:

Նեխլիւդօվը այդ ամառ, մօրաքոյրների մօտ ապրելիս, զըսնւում էր այն յափշտակուած վիճակում, երբ պատանին առաջին անգամ՝ ոչ ուրիշների ցուցմունքներով, այլ ինքնարերարար վիտակցում է կեանքի ամբողջ գեղեցկութիւնն ու լրջութինը և սրա մէջ մարդուն յատկացուած գործի ամբողջ կարևորութիւնը, տեսնում է թէ իր և թէ ամբողջ աշխարհի անվերջ կատարելազործման հնարաւորութիւնը ու անձնատուր է լինում այդ կատարելազործման ոչ միայն յուսալով, այլ կատարելապէս հաւատալով, որ ինքը կը հասնի իր երեսակայած ամբողջ կատարելուութեան: Այդ տարին գեռ համալսարանում նա կարդացել էր Սպէնսէրի «Social Statics»-ը, և Սպէնսէրի դատողութիւնները հողային սեփականութեան մասին սաստիկ տպաւորութիւն էին գործել նրա վրայ, մանաւանդ այն պատճառով, որ նա ինքը խոշոր հողատիրուհու որդի էր Նրա հայրը հարուստ չէր, բայց մօրը բաժինք էին տուել մօտ 10 հազար օրավար հող: Նա այն ժամանակ սուածին անգամը հասկացաւ մասնաւոր հողատիրութեան ամբողջ անարդարութիւնը և, այն մարդկանցից լինելով, որոնց համար ամենաըրածը հոգեկան զուարձութիւնն է կազմում յանուն բարոյական պահանջների զուարերութիւնը, վճռեց չօգտուել հողային սեփականութեան իրաւունքից և այն ժամանակն և եթ գիւղացիներին տուեց հօ-

ըից իրան ժառանգութիւն մնացած հողը, չէնց այդ նիւթի մասին էր զրում նա իր շարադրութիւնը:

Նրա կեսարը այդ տարի մօրաքոյրների դիւլում այսպէս էր անց կենում, — նա շատ շուտ էր վեր կենում, երբեմն ժամի երեքին, և արեր գետ չը ծագած դնում էր լոգանալու տարի տակին հոսող զետում, երբեմն զետ տուաւունան մշուշը չանցած և վերադառնում էր, երբ զետ ցոյր պատած էր լինում խոռն ու ծաղիկները, երբեմն, առաւաները, սուրձը իմելուց յետոյ, նա նստում էր շարադրութիւնը զրելու կամ շարադրութեան աղբիւրները կարդալու, բայց շատ յաճախ, փոխանակ կարգալու և գրելու, դարձեալ գուրս էր գալիք և թափառում դաշտերում ու անտառներում: Ճաշից առաջ նա քնում էր մի տեղ պարտէզում, յետոյ ճաշի ժամանակ ուրախացնում և ծիծաղիցնում էր մօրաքոյրներին իր զուարիթ տրամադրութեամբ, այնուհետեւ զրում էր ձիով կամ նաւակով և երեկոյեան դարձեալ կարդում էր կամ ժամանակ անցիացնում մօրաքոյրների հետ՝ խաղաթդիթերով վիճակ բաց անելով: Գիշերները, մասնաւոն լուսնիայ եղած ժամանակ, նա յաճախ չէր կարգանում քնել միմիայն այն պատճառով, որ շատ մեծ, շատ յուղիչ բերկրութիւն էր զգում կեսարքից և, փոխանակ քնելու, երբեմն մինչեւ լոյս ման էր գալիս պարտէզում իր երազանքների և մտածմունքների հետ ընկած:

Սցրաէս հանգիստ ու երջանիկ ապրեց նա առաջին ամիսը մօրաքոյրների մօտ, առանց ամեննեին ուշադրութիւն դարձնելու կէս-աղախին, կէս-աանուաղջիկ սեաչեայ և արագաքայլ կատիւշայի վրայ:

Մօր թեփ տակ մնծացած, Նեխլիւգովը 19 տարեկան հասակում մի բոլորսվին անմնոյ պատամի էր: Նրա երազանքներում կինը ներկայանում էր Նրան միմիայն իրը ամուսինն իսկ այն բոլոր կանացը, որոնք, Նրա հասկացողութեամբ, չին կարող Նրա ամուսինը լինել, կին չին Նրա համար, այլ մարդիկ: Բայց դէպքը այնպէս բերեց, որ այդ ամառ, Համբարձման, Նրա մօրաքոյրների մօտ եկաւ գրացուհիներից մէկը իր երկու հասած աղջիկների ու զիմնազիստ տղայի և իրանց մօտ հիւր եկած մի ջանէլ նկարչի հետ, որ գիւղացի ծնողների որդի էր:

Թէյից յետոյ սկսեցին գօրելիի *) խաղալ տան առջենի

*) Արդ խաղը, գործեռ, կայանում է սրանում, զոյդ-զոյդ, տղայ ու աղջիկ, շարում են իրար իտոնից, ամենից առաջ կանգնում է մէկը, որ առում է տալրամ եմ, այբում եմ, այնուհետեւ նեղի է ունենում հետեւալ հարց ու պատասխանը — Քինչո՞ւ ես ալրում, տակչիկ եմ